## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<09>> փետրվարի 2021թ. N ՄՈ/42-2021

ք. Արմավիր

### <<ՈՍԿԵՀԱՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ ՇՄԱՎՈՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 156-րդ, 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի օգոստոսի 31-ի N25-Ն հրամանը և <<Ոսկեհատի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սյուզաննա Շմավոնյանի 2021 թվականի հունվարի 23-ի դիմումը.

ո ր ո շ ու մ  ե մ՝

1. <<Ոսկեհատի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սյուզաննա Շմավոնյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը՝ 2021 թվականի փետրվարի 15-ից մարտի 22-ը ներառյալ՝ 30 աշխատանքային և 1 տոնական օր տևողությամբ:
2. Սյուզաննա Շմավոնյանի արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածում <<Ոսկեհատի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել <<Ոսկեհատի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Սոֆիկ Պետրոսյանին:
3. Սյուզաննա Շմավոնյանին աշխատանքի մեջ համարել 2021 թվականի մարտի 23-ից:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Հ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 09.02.2021 10:12:16 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230